

ՐԱՖՖԻՆ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍ

Լ. Բ. ՄԱԿԱՐՅԱՆ

Հայ ժողովրդի ապագան, նրա պատմական ծակատագիրը Րաֆֆու գրական և հրապարակախոսական գործունեության, հայրենասիրական խորհրդածությունների բարոյահոգևոր առանցքն են: Մեծանուն գրողն իր ողջ կյանքով ու գործունեությամբ անձնավորել է հայրենիքի ազատագրման, օտար զավթիչների դեմ պայքարի, նրա տնտեսական ու քաղաքական անկախության ձեռքբերման ձգտումը: Րաֆֆու սոցիալ-քաղաքական հայացքները չեն կորցրել իրենց պատմական, տեսական և գործնական հետաքրքրությունը և այսօր: Դրանք ամենից առաջ վերաբերում են ազգային միասնության, գործուն հայրենասիրության՝ որպես լուրաքանչյուր ազգային անհատի քաղաքացիական գիտակցության ձևավորման, հրատապ հարցերին: Րաֆֆին լինելով ազգային ձգտումների ու գաղափարների՝ ակտիվ կրողն ու զարգացնողը՝ հայ ժողովրդի վերածնունդը սերտորեն կապեց ազգային և սոցիալական ազատագրության, հավասարության, արդարության և ազատության վեհ գաղափարների կենսագործման հետ: Նա համոզված էր, որ ազգի քաղաքական ազատագրումը ուղի կհարթի նրա տնտեսական ու սոցիալական ազատագրության համար:

Սոցիալական և ազգային խնդիրների միասնական լուծման դիրքերից ելնելով՝ Րաֆֆին գտնում էր, որ անհրաժեշտ է ոչ միայն թոթափել պարսկա-թուրքական լուծը, շախջախել բռնակալության շղթաները և քաղաքական անկախության հասնել, այլև արմատական վերափոխումներ անցկացնել ներազգային հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Նա համոզված էր, որ հայ ժողովրդի քաղաքական ազատագրությունը ազգի ապրելակերպի, նրա հոգևոր կյանքի էական վերափոխման ու բարենորոգման նախադրյալն է: Րաֆֆու նման քաղաքական դիրքորոշումը խիստ համահնչուն է Ֆ. Էնգելսի այն խոսքերի հետ, որոնց համաձայն «ազգային ճնշման վերացումը ցանկացած առողջ ու ազատ զարգացման հիմնական պայմանն է»¹: Մյուս կողմից Րաֆֆին տեսնում էր այն հակադարձ կապը նշված գործունեների միջև, որը դրսևորվում էր նրանում, որ ազգային կյանքի տնտեսական, սոցիալական և հոգևոր-մշակութային ոլորտներում տեղի ունեցող խորը բարեփոխումները անհրաժեշտ նախադրյալ են ստեղծում օտարերկրյա տիրապետությունից ազգի քաղաքական ազատագրության համար:

Ակնհայտ է, որ Րաֆֆու հայացքները ազգային-ազատագրական շարժման, նրա գործունեների ու միջոցների վերաբերյալ բնութագրում են մեծ հայրենասերի հասարակական-քաղաքական աշխարհայացքային բարոյահոգևոր հիմքերը: Րաֆֆու հայացքները ազգային-ազատագրական պայքարի հրատապ հարցերի վերաբերյալ ձևավորվել էին ոչ թե պասսիվ հայեցողական, այլ հեղափոխական-դեմոկրատական դիրքորոշումների հիմքի վրա: Անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ Րաֆֆին ունեցել է իր ըմբռնումը ազգի էության ու նրա բնորոշ գծերի մասին, որը հակոտնյա է ազգի վերաբերյալ գոտ կրոնա-կղերական ըմբռնումներին, քանի որ ազգի էությունը նա չէր նույնացնում միասնական կրոնական հավատի ու ծեսերի ամբողջությանը: «...Ազգության գաղափարը, — ընդգծում էր Րաֆֆին, — պայմանավորվում է ոչ թե կրոնով, այլ նրա ցեղական հատկություններով, որոնց մեջ առաջին տեղը բռնում է լեզուն, որ է միշտ կլինի ազգի պահպանության հիմքը»²: Րաֆֆին իրավացիորեն գտնում էր, որ ազգային ընդհանրությունը տևի ավելի բազմաշերտ ու խոր բովանդակություն: Ազգը, որպես պատմական հանրույթ, «կապված է իր արյամբ, պատմական անցյալով: Այն կապված է լեզվով, որի մեջ ամփոփված է նրա կյանքը: Այն կապված է իր տնտեսական և հասարակական շահերով»³: Րաֆֆին ջերմորեն պաշտպանում էր հայ ազգի միասնության ու քաղաքական համախմբման

¹ К. Маркс, Ф. Энгельс, Соч., 1956, М., т. 7, с. 406.

² Րաֆֆի, Եր., 1962, հ. 9, էջ 501:

³ Տե՛ս «Աշակ», 1873, № 14:

գաղափարը, որը ուներ ոչ միայն ազգապահպան նշանակություն, այլև կոչված էր հայ մարդուն դաստիարակելու քաղաքացիական ինքնագիտակցության ու հայրենասիրության ոգով, ընդգծելու յուրաքանչյուր անհատի նկատմամբ ազգային շահերի առաջնայնությունը: Ընդ որում, ազգի քաղաքական համախմբման հիմքը տեսնում էր համազգային շահի բարոյական գիտակցության մեջ: Բաֆֆին առաջ էր քաշում հայրենիքին ծառայելու և հանուն նրա անկախության գիտակցաբար ինքնազոհաբերվելու գաղափարը: Նա համոզված է, որ հայրենասեր անհատը պետք է հասարակական ամենօրյա գործունեությամբ նպաստի աշխատավոր մարդկանց սոցիալական ու քաղաքական ազատագրությանը, ազգային ճնշման վերացմանը:

Այսպիսի քաղաքական դիրքորոշումը Բաֆֆուն թույլ էր տալիս նորոգի իմաստավորելու արևմտահայերի ազգային-ազատագրական շարժման հրատապ հարցերը: Ընդ որում, այդ հարցերի հրապարակային քննարկումը ամենևին չէր սահմանփակվում վերացական, զուտ մտահայեցողական պատկերացումներով, այլ կապվում էր համազգային խնդիրների գործնական լուծման կետ: Նա լիահույս է, որ անհրաժեշտ է անցնել հետևողական ու գոյննական քայլերի՝ ուղղված օտարերկրյա տիրապետության ահավոր լծի հաղթահարմանը: Նա ծաղրի է ենթարկում իրենց հանճարներ հորջորջող ազգային քաղքենիների ցուցադրական հայրենասիրությունները, քանի որ «նրանք չեն սիրում ազգային գործերի մեջ նույնը, որովհետև միշտ երևակայում են, որ իրանք մի «մեծ բան պիտի անեն, ովի ժամանակը չէր հասնի»..., որ պիտիսի վայ-հայրենասերները «...արհամարհում են այժմյան գործիչների գործը, համարելով երեխայական խաղ»⁴: Այդ վայ-հայրենասերները ամեն կերպ ձգտում են կարգվել ազգի ուսուցչապետ, նրան խորհուրդներ տալ, սակայն իրենց հեռու են պահում գործնական քայլերից՝ բավարարվելով միայն բարոյախրատական կոչերով ու ցանկություններով:

Բաֆֆու գործուն հայրենասիրության նվիրական ծրագրի առաջնահիմքը կազմում է հայ ժողովրդի ինքնապաշտպանության գաղափարը: Ինքնապաշտպանության կամ ինչպես Բաֆֆին է ասում. «անձնապաշտպանության» գաղափարը իր մեջ մարմնավորելով ազգային ազատագրության ու արժանապատվության, ազգի ներքին համախմբվածության մեջ միակ հոգեատարող բարոյական ուժը, ամբողջովին հակադրվում է քրիստոնեական հնազանդության ու հեղուկության հոգեբանությանը: Բացահայտելով ազգի կենսափիլիսոփայությունը, Բաֆֆին ցույց է տալիս, որ օտար բռնակալներից հայրենիքի ազատագրումը պահանջում է ինքնագիտողություն, որի բովանդակությունը հայրենասիրությունն է, համազգային շահին ծառայելու նվիրական պատրաստակամությունը: Դա է որոշում անհատի կյանքի իմաստն ու նշանակությունը, նրա ազգային գիտակցության արժեքը:

Ուշադրության արժանի է այն փաստը, որ «անձնապաշտպանության» գաղափարը հիմնավորելիս Բաֆֆին դիմել է սոցիալ-դարվինիզմի տեսությանը, որը հասարակական զարգացման գլխավոր ուժը համարում էր գոյության պայքարն ու բռնական ընտրությունը: Այդ ժամանակաշրջանում Բաֆֆին ուսուերներից թարգմանել է Մեչնիկովի՝ «Մարդը՝ գոյության համար պայքարում» աշխատությունը, որտեղ տրված են նաև գրողի ծավալուն ծանոթագրությունները: Նորհորհաձեռելով ազգի քաղաքական անկախության համար արևմտահայության զինված պայքարի մասին, Բաֆֆին համոզված է, որ Թուրքիայում կիրառվող սոցիալական և ազգային ճնշմանը, բռնի ձուլմանն ու ուժացմանը դիմադրավելու համար հայ ժողովուրդը պետք է բարձրադիպ ազգային-ազատագրական հեղափոխության դրոշմը: «Կայծեր» վեպում այն միտքն է արժարժվում, որ չար ուժերին պետք է դիմակալել ոչ թե աղոթքով ու խաչով, այլ ուժով: Իսկ «Զալպետրիին» փախկում «ինքնապաշտպանության» գաղափարը իր անձնավորումն է ստացել բռնակալ ուժերի դեմ պայքարող ազատասեր ու արի Սահրատի կերպարում, որն ի տարբերություն իր այն հայրենակիցների, որոնք քարոզում էին քրիստոնեական համբերաւարություն, փոքրաթիվ մի շրջանի գլուխն անցած պայքարում է ժողովրդի հարստահարիչների դեմ, բռնությանը պատասխանելով բռնությամբ, չարի դեմ մղվող ահեղ կռվում ապավինելով միայն զենքի ուժին: Բաֆֆին առանձնահատուկ համակրանքով է վերաբերում նարոդնիկական գաղափարախոսությանն ու նրա հետևորդներին: Իր այդ դիրքորոշմամբ նա փորձում է հիմնավորել ազգային-ազատագրական պայքարում անհատների պատվական դերն ու նշանակությունը: Միաժամանակ, նա ընդգծում է այն միտքը, որ պատմական անհատների գործունեության անկյունաքարը ժողովրդի հետ ունեցած սերտ միասնության մեջ է: Ազգային-ազատագրական պայքարի նվիրական զինվորի կերպարը մարմնավորվել է մեծանուն գրողի բազմաթիվ ստեղծագործությունների մեջ: Դրա վառ ապացույցն է նարոդնիկ Դուրովչյանի կերպարը «Խենթը» վեպում: Դիմելով աշխատավոր հայ մարդկանց Դուրովչյանը դյուրին ձևով բացատրում է անձնապաշտպանության գործնական նշանակությունը: «Անձնապաշտպանության վարժապետը ինքը բնությունն է: Բընությունը թուր էակներին, որոնք աճելու և բազմանալու ունակություն ունեն, տվել է իրենց նմանների հետ կապելու ընդունակություն մե՛կ»⁵: աստ, մյուսին սակավ: Բնության մեջ ինչ-որ

⁴ Բաֆֆի, հ. 5, էջ 277:

կատարվում է բույսերի և անասունների կյանքում, նույնը կատարվում է և մարդկային կյանքում: Այստեղ ևս հանդիսանում է Թուլն կոիվը, միայն ավելի սաստիկ և ավելի բազմատեսակ կերպով»⁵: Այնուհետև ավելացնում է. «Անձնապաշտպանության օրենքները պահանջում են պատասխանել թշնամուն նույն զենքով, ինչ զենքով, որ նա ծնում է և մահացնում է մեզ»⁶:

Հետաքրքիր է նկատել և այն, որ Ռաֆֆին թերահավատությամբ է վերաբերվում նարոդնիկների տակտիկային, քանի որ համոզված է, որ արանձին հայրենասեր մտավորականների անձնագործությունն ու ժողովրդի ազատագրության արդար գործին նրանց նվիրվածությունը անկարող են ոտքի հանել ժողովրդական զանգվածներին և նրա ողջ սոցիալական ցասումը ուղղել հարստահարիչների դեմ: Նույն Դուդուկչյանը միանգամայն ինքնաքննադատաբար է վերաբերվում իր և իրեն համախոհ գինակիցների գործունեությանը: Ավելին, դա նույնիսկ համարում է դնքիչոտություն: «Ամբողջ ժամանակներ,— ասում է նա,— նստել Պիլսոմ բոլորովին անգործ, չհետազոտել Հայաստանի կյանքը, չուսումնասիրել երկիրը, չձայնաբանալ ժողովրդի պետքերի և պահանջների հետ, չնախապատրաստել նրան մի լավ ապագայի համար, և հանկարծ հայտնվել թե մեջ, նրա ձեռքը զենք տալ, որ կովե իր անձնապաշտպանության իսամար, դա հազիվ թե կարող էր ընդունելություն գտնել»⁷:

Ռաֆֆին ցույց տալով, թե ինչպիսի սոցիալական խորթացածության ու անտարբերության լուրորինակ պատճեջ է ստեղծվել ժողովրդական լայն զանգվածների և հայրենասիրական զգացումներով ու խոհերով առկեցուն հերոս-մտավորականների միջև, հանգում է այն ըմբռնմանը, թե որքան դժվար ու հակասական է այն օրյեկտիվ իրադրությունը, որի պայմաններում ծավալվում է ազգային-ազատագրական շարժումը, թե որքան արգելապատնեշներով լի է համազգային իդեալի իրականացման կենսուղին: Այս առումով խորիրոպանչական է Ասլյանի կերպարը: Նրա անձնվեր գործունեությունը, անմասցորդ նվիրումը ժողովրդին այդպես էլ ամբողջովին չի ընդունվում վերջինիս կողմից:

Չնայած նարոդնիկ գործիչների և աշխատավոր ժողովրդի միջև եղած պատմական խնջրդպետի առկայության, Ռաֆֆին այնուամենայնիվ նրանց հայրենանվեր գործունեությունը ավելորդ չի համարում:

Մեծանուն գրողի լայնահուն քաղաքական հայացքը ազգային-ազատագրական շարժման նկատմամբ, նրա ներքին դժվարությունները լուսարկող պատմական գիտակցությունը վերահաստատում են այն գործնական դրույթը, ըստ որի համազգային ազատագրական պայքարի ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է և՛ մտավորական-խոռվարարների պրոպագանդիստական գործունեությունը ժողովրդական լայն զանգվածների շրջանում, և՛ գյուղացիների զինված դիմադրությունն ընդդեմ հարստահարիչների: Այդ իմաստով ժողովրդի նկատմամբ պատմական հույսի ու լավատեսության ոգով են տոգորված Ռաֆֆու հետևյալ խոսքերը. «...ամեն մի ծնված և սահմանափակված գործություն որքան ավելի սեղմվում է, այնքան ավելի զարգանում է նրա մեջ ընդդիմախոսության ուժը: Այնուհետև նա պիտի պայթի, նա պիտի խորտակե իրան սահմանափակող պատվարը և իր բնական ազատ ծավալականությունը պիտի հետևի...: Ժողովուրդը, ամբոխը նույնպես մի գործություն է: Նա երկար չէ կարող համբերել իրան ծնշող և ստրկացնող կոպիտ ձեռքին: Նա վերջապես պիտի խլրտի, պիտի խորտակե իր շրթանները և պիտի թոթափե բռնակալի լուծը: Բուպեն հասել է... այս դրության մեջ և այժմ մեր ժողովուրդը»⁸:

Իր հերոսների միջոցով Ռաֆֆին հստակորեն արտահայտում է իր հավատո հանգանակը. ազգային-ազատագրական պայքարի նպատակների կենսագործումը սերտորեն կապված է անթիվ ու անհամար փորձությունների, մարդկային սխրանքների հետ: Եվ որ այդ պայքարի բարձրակետը զինված ապստամբությունն է: Գրողը լիահույս է, որ ազգի հայրենասեր ուժերի համախմբումը ժողովրդական լայն զանգվածներին դուրս է բերելու հեղափոխական պայքարի թատերաբեմ՝ նոր թափ հաղորդելով ազգային-ազատագրական շարժման նվիրական գործին: Նա այն կարծիքին է, որ ոչ մի ազգ չի կարող զարգանալ, եթե ազատ չէ քաղաքականապես և չունի իր ինքնուրույն պետականությունը: Այսպիսին է համաժողովրդական շարժման սոցիալական ու քաղաքական բաղադրությունը:

Տեղին է նշել, որ հայրենասիրական գիտակցության նոր ակիքը համընկնում է 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի, նրան նախորդող ազգային-ազատագրական շարժման նոր փուլի սկզբնավորման հետ: Դրա հասուն ու վառ արտահայտություններն էին Զեյթունի ապստամբությունը, Ֆիդայիների ծավալվող շարժումը, Վանում, Էրզրումում և Ղարաբաղի խառն գործող գաղտնի ազգային-ազատագրական կազմակերպությունների գործունեության արդյունք-

⁵ Ռաֆֆի, Երկ. ժող., հ. 3, էջ 188:

⁶ Նույն տեղում, էջ 189:

⁷ Ռաֆֆի, հ. 3, էջ 192:

⁸ Ռաֆֆի, հ. 4, էջ 463:

ները⁹: Այդ ժամանակաշրջանում ազատասիրական ու հայրենասիրական տրամադրությունները տարածվեցին հայ հասարակայնության տարբեր շերտերի, հատկապես մտավորականության շրջանում:

Հայ մտավորականության նոր հույսերն ու սպասումները հող նախապատրաստեցին ազգային-ազատագրական շարժման ծրագրային պահանջների հստակ ձևավորման համար: Իր «Ռեն-թը» և «Կայծեր» վեպերում, ինչպես նաև 70—80-ական թթ. հրատարակած հայրենաշունչ հրապարակախոսական գործերում Բաֆֆին մշակեց ազգային-ազատագրական շարժման ամբողջական ծրագիր, որը հաշվի էր առնում հասարակական իրադրության, ինչպես նաև առաջադրված նպատակի կենսագործման օբյեկտիվ և սուբյեկտիվ հնարավորությունները: Այդ ծրագիրը ուղղված լինելով իր դարն ապրած ֆեոդալական հարաբերությունների և քաղաքական հաստատությունների դեմ, արտացոլում էր հասարակական առաջընթացի բուրժուա-դեմոկրատական զարգացման հիմնական միտումները: «Ռենս ուշ չէ» հողվածում Բաֆֆին մատնանշում է ազգային-ազատագրական շարժման ծավալման երկու եղանակ. «Երբ մի ժողովուրդ այնքան զարգացած է, որ հասկանում է իր իրավունքները... և հասկանում է, որ ինքն բռնաբարվում է,— և միևնույն ժամանակ այնքան պատրաստված է, որ կարող է ընդդիմադրել բռնակալի կառավարականությանը,— ժողովուրդը ինքն է բողոք բարձրացնում, թե՛ զենքով և թե՛ խոսքով: Այդ լինում է հեղափոխական ցույցերով, և դրան ասում ենք, թե՛ ազատության զգացմունքը արմատիցն է ծագում, ամբոխի սրտիցն է բխում, — ցածից վեր է բարձրանում: Իսկ երբ ժողովուրդը զարգացած չէ, և գտնվում է մի այնպիսի հիվանդոտ դրության մեջ, որ միայն զգում է իր ցավերը, բայց դարման անտելու շնորհ չունի,— այն ժամանակ նրան իր թշվառ վիճակից ազատելու հոգսը վերակից դեպի ցած է իջնում: Պա հայտնվում է բարձր կենտրոններում¹⁰, մայրաքաղաքներում, ուր գտնվում են ժողովրդի ավելի զարգացած և գործունյա դասերը: Ամբոխը ենթարկվում է այդ դասերին և կրավորական դեր է խաղում: Առաջին միջոցը արմատական է, իսկ վերջինը՝ ներգործական»¹⁰:

Վերլուծելով հայ ազգային-ազատագրական շարժման ծավալման պատմական օրինաչափությունները, բացահայտելով արտաքին ու ներքին գործոնների հարաբերակցությունը այդ շարժման մեջ, մեծ հայրենասերն ու գաղափարախոսը հայ ժողովրդի ճակատագիրը միամտորեն չէր կապում արտաքին ուժերի միջամտության հետ, այլ գտնում էր, որ հայ ազգի փրկության գործը նախ և առաջ հենց իր՝ ազգի, կամքով ու մտքով միասնական հանրության սուրբ գործն է: Այս համոզմունքը նրա սոցիալ-քաղաքական հայացքների ատաղձն է, որը կոնկրետացնում է ազգի սոցիալական փրկության մասին Բաֆֆու պատկերացումները. հանձինս ազգի, ժողովրդի առաջ է քաշում պատմության սոցիալական սուբյեկտի, նրա զարթոնքի ու գործունեության պատմական անհրաժեշտության գաղափարը: Պրանով է նա բացատրում հայ ազգի գոյատևման ու կենսականության նոր իրողությունները, ստեղծված իրադրությունը իրատեսորեն գնահատելու պատմական անհրաժեշտությունը: Բաֆֆու այդ դիրքորոշումը ավելի հստակ դարձավ ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո: Պարզ դարձավ, որ եվրոպական տերությունների համար հալկական հարցը միայն միջոց է արևելքում շահադիտական քաղաքական նպատակները ջողարկելու համար: Ազգային-ազատագրական շարժման լայնխոհ գաղափարախոսի քաղաքական իրատեսությունն ու մտազգաստ գիտակցությունը թելադրում էր. «Պե՞սախտ է այն ազգը և միշտ դժբախտ կմնա, որ օտարի օգնությանը կարող է կլինի: Ոչ ոք իր հոր հոգու համար մեզ չի օգնի, նա պետք է տասը բան անեն մեզանից, որ մի բան տա: Ողորմություն խնդրողի երեսը միշտ սև կլինի և քսակը դատարկ»¹¹: Այս ամենը վերստին պայցուցում է այն միտքը, որ Բաֆֆին ոչ թե վերացական մտածող է, այլ իր տեսական դրույթները հիմնավորելիս ելնում է ազգի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութափոխ վիճակի իրական գնահատականից:

Խելացի քաղաքագետի նրա ներզգացողությունը իրավացիորեն հուշում է, որ քաղաքակիրթ ազգերը (Նկատի ունի, հատկապես, եվրոպական տերություններին) դիմակավորված երեսպաշտությամբ ջողարկում են իրենց իսկական պատմական հավակնություններն ու Նկրտումները. «Լուսավոր կոչված ազգերի այժմյան քաղաքականությունը, այդ մեծ պոռնիկը, — յուր կեղծավոր և անուշ լեզվով, յուր դիմակավոր դեմքի սնգուրած փայլողությամբ հրապուրում է ջո սեբրը, բայց հավատացնում են ջեզ բարեկամ, որ նորա այն քաղցրախոս շրթունքների մեջ թաքցուցած է մահաբեր թույլը»¹²:

Բաֆֆին ամբողջովին մերժում է այն ստահող թեզը, որ իբր Թուրքիան քաղաքակիրթ աշխարհին միանալուց հետո իսպառ կիրառարկի իր հպատակ ժողովուրդներին հարստահարելու

⁹ Ավելի մանրամասն տե՛ս Մ. Ներսիսյան, Նշված ժողովրդի ազատագրական պայքարը ընդդեմ թուրքական բռնակալության, Երևան, 1955, էջ 21:

¹⁰ Բաֆֆի, հ. 9, էջ 297—298:

¹¹ Բաֆֆի, հ. 4, էջ 477:

¹² Բաֆֆի, հ. 1, էջ 68:

պատմական պրակտիկայից¹³: Կամ էլ, թե եվրոպայի քրիստոնեական մեծ տերությունների ճնշմամբ դիվանագիտական եղանակով կարելի է լուծել հայկական հարցը¹⁴: Անդրադառնալով այդ կենսահույզ պրոբլեմին և ընկալառելով նրանց, ովքեր Բեռլինի համաժողովի 61-րդ հոդվածի մեջ ոսկու հանք են տեսնում, մեծանուն հայրենասերն իր «Ի՞նչ կապ կա մեր և Տաճկաստանի հայերի մեջ» հոդվածում գրում է. «Այդ հանքը մեզ շատ չէ շլացնում: Այս և այն հոդվածը, մանավաճ, երբ նա ֆորմի համար գրված է լինում, մի ժողովրդի վերածնելության վերաբերությամբ այնքան նշանակություն ունի, որքան մեռած ոնցեպոլը հիվանդի առողջության համար, երբ դեղերը չեն գործարկում:

...Տաճկահայաստանի հայոց խնդիրը պետք է կայանա այսուհետև անդադար և անընդհատ նախապատրաստության գործի մեջ, որպեսզի նրանք կազմ և պատրաստ հանդիպեն այն մեծ օրվան, երբ կրկին անգամ կգարկե ազատության ժամը»¹⁵:

Առողջամիտ քաղաքագետն ու գրողը պարզ գիտակցում էր, որ Թուրքիան, օգտվելով Անգլիայի և Գերմանիայի հովանավորությունից, ամենևին ոչ մի լուրջ մտադրություն չունի ինչ-որ գործնական քայլեր կատարելու արևմտահայ բնակչության չարքաշ կյանքը բարելավելու ուղղությամբ:

Ռուս-թուրքական պատերազմի շրջանում գրված գեղարվեստական և հրապարակախոսական գործերում Բաֆֆին ոչ միայն տվել է հայ ազգային-ազատագրական շարժման ծավալուն բնութագիրը, այլև մշակել է նրա ամբողջական ծրագիրը, ուր առանձնահատուկ շեշտվում է այն գաղափարը, որ հայ ժողովրդի փրկությունն իր համախմբվածության ու կազմակերպվածության, բարձր հայրենասիրական գիտակցության ու ազգի հավաքական կամքի մեջ է:

Արևմտահայերի ազգային հույսերը չարքարացան, ռուս-թուրքական պատերազմի անընդհատ ելք էլ ավելի լուծեղացրեց հայերի նկատմամբ հալածանքն ու ճնշումը՝ արևմտահայ մտավորականության մի մասի մեջ ծնելով հոռետեսական, անկումային ու հաշտվողական տրամադրություններ: Այդ գործիչները պնդում էին, որ հետպատերազմական Թուրքիայում ոչ մի հնարավորություն չկա բռնակալության լծից դուրս գալու համար, եզրահանգում էին, որ անհրաժեշտ է ընդհանրապես հրաժարվել գինված պայքարից՝ ապավինելով հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների «բարյացակամությունը» շահելու ստրկահաճո հոգեբանությամբ: Պրա հետ մեկտեղ արևմտահայ հասարակալության բուրժուական շրջանները մեծ հոյակեր էին կապում սուլթանական կառավարության խոստացած սահմանադրական «բարենորոգումների» հետ, միամտաբար կարծելով, թե քաղաքակրթելուց հետո թուրքերը կդադարեցնեն հայերի նրկատմամբ իրենց անսանձ կամայականություններն ու անիրավությունները: Անգլիական իրատեսությամբ ու պատմական կանխատեսման ճշմարտացիությամբ են հագեցած Բաֆֆոն հետևյալ խոսքերը. «Թուրքը այսօր անկիրթ բարբարոս է, բայց քաղաքակրթվելուց հետո կդառնա կրթյալ ավանակ, և այն ժամանակ ավելի վտանգավոր կդառնա»¹⁶:

Ձևնադատելով «բարենորոգումներին» ապավինող մարդկանց, բացահայտելով նրանց պատմական միամտությունն ու սին հույսերը՝ գրողը կոչ է անում չտրվել ինքնախաբեության ու պատրանքների: Մեկ այլ հիթով խոսելով, որ լուրացանչուր՝ հայի անհրաժեշտ է պատմական դասերի յուրացում, Բաֆֆին խորագիտակությամբ եզրակացնում է. «Մենք ունենք պատմություն, 850 տարվա պատմություն, թե ինչպես է վարվել մեզ հետ թուրքը: Նրա ամեն մի տողը արյունով և արտասուքով է գրված: Ով որ ուրանում է պատմությունը, առաջ ինքն է կնքում իր դատապարտության դատակնիքը:

Մի՞թե երեկվա գազանը կարող է այսօր հրեշտակ դառնալ: Մինչև նրա հրեշտակ դառնալը, Թուրքիայում հայի անուրը միայն մնացած կլինի»¹⁷:

Այսպիսով, մեծանուն հայրենասերն ու լրջամիտ քաղաքագետը ոչ միայն լիովին չէր կիսում արևմտահայ հասարակալության առանձին շրջանների «բարենորոգչական լավատեսությունը», այլև դա համարում էր քաղաքական կարճատեսության դրսևորում: Համոզված լինելով, որ հայ ժողովուրդն իր անկախությունը պետք է ձեռք բերի ազգային-ազատագրական պայքարի միջոցով, Բաֆֆին առաջ է քաշում ազգային միասնության գաղափարը: Նա գտնում է, որ եթե ազգը դառնա մի հավաքական բուռնաց, ապա հաղթանակը ավելի մոտալուտ կդառնա: Պրա համար էլ նա հետևողականորեն մերկացնում էր ոչ միայն ազգային այն ուժերին, որոնք հանդես էին գալիս ընդդեմ ազգային-ազատագրական պայքարի և խոնարհվում էին սուլթանական ուժերի առջև, այլև ազգի միասնությունը խաթարող բոլոր ուժերի դեմ, որոնք իրենց անվերջնալի ու անմիտ վեճերով շեղում են ազգի ուշադրությունը իր հիմնական խնդիրներից: Բաֆֆին հայ ժողովրդի արտաքին թշնամիներ էր համարում սուլթանական և ցարական բռնապետությունները:

¹³ Տե՛ս Բաֆֆի, հ. 9, էջ 271:

¹⁴ Նույն տեղում, էջ 490:

¹⁵ Նույն տեղում, էջ 490—491:

¹⁶ Բաֆֆի, հ. 9, էջ 271:

¹⁷ Բաֆֆի, հ. 9, էջ 272:

րը, իսկ դրանցից գեների ուժով հայ ժողովրդի ազատագրումը բնութագրում է մեծանուն գրողի սոցիալ-քաղաքական հայացքների բովանդակությունը: Նա համոզված է, որ «մենք ունենք մի թեև անմշակ, բայց մեծ տերություն—ամբոխը...»¹⁸, այսինքն՝ ժողովուրդը, որը մի օր պետք է տապալի բռնակալի լուծը: Նա չէր կասկածում, որ կգա ժամանակը, երբ ծնշված ու հարստահարված հայ ժողովուրդը ուղի կկանգնի և կփշռի ատելի բռնակալության շղթաները:

Անցնելով արևմտահայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի շարժիչ ուժերի բնութագրությանը, Բաֆֆին հստակ գիտակցում էր, որ այդ պայքարին մասնակցում են տարբեր սոցիալական խմբեր ու խավեր: Ընդ որում, ազատագրական պայքարի հիմնական շարժիչ ուժը աշխատավոր խավերն են՝ ընչազուրկ գյուղացիությունը և նրա պրոլետարականացված մասը, ինչպես նաև՝ առաջադեմ երիտասարդությունը:

Բաֆֆին հույսի ու հավատի ներքին համոզմունքով իր հայացքը ուղղում է նոր սերնդի այն երիտասարդ մարդկանց, ովքեր հաղորդակցվելով Եվրոպայի քաղաքակիրթ ժողովուրդները առաջավոր գիտության ու մշակույթի նվաճումներին, միաժամանակ գերծ են ամեն մի եվրոպականի առջև խոնարհվելու ապագայնական դիրքորոշումներից: Նրանց ամենօրյա կյանքը հագեցված է իր բազմաշարժ ժողովրդի բարօրության համար պայքարելու նվիրական զգացումով ու պարտականությամբ: Երիտասարդության կենսական էներգիան ու ազատասիրական նպատակամղվածությունը համարելով ազգի «թարմ ուժն ու գլխավոր հզորությունը», մեծանուն գրողը նրա հետ էր կապում մեր ժողովրդի ազատագրության սուրբ գործի հաղթանակը: Իր «Հայ երիտասարդությունը» հոդվածում, որն իր ժամանակի հայ երիտասարդության տարբեր շերտերի ապրելակերպի, սովորությունների ու նրանցում գերիշխող հասարակական մտայնությունների սոցիոլոգիական վերլուծության փայլուն նմուշ է, անդրադառնալով ուսանողության քաղաքական առաքելությանը Բաֆֆին գրում է. «Ուսանող մանկտին ամեն ազգի մեջ և ամեն ժամանակներում եղել է ազատության սիրահար, բռնության թշնամի, առաջադիմության առաջնորդ և լուսավորության առաքյալ»¹⁹: Հայրենասեր գրողը Փարիզի ուսանողության օրինակով ցույց է տալիս, որ «Երբ պատահում է մի ժողովրդական շարժում, երբ ծագում է մի քաղաքական հեղափոխություն, ուսանողները խլրտում են, զարթնում են որպես քնած աղյուծ, և առաջինն են լինում, որ թնդեցնում են փողոցները մարտելիեզերեով, փշրում են բռնակալների արձանները և թռչում են բարիկադների վրա: Ով որ փոքր ի շատե ծանոթ է Ֆրանսիական պատմությանը, գիտե, թե որպիսի մեծ դեր խաղացին ուսանողները 1830 և 1848 թվականներում, և մանավանդ Կոմունայի ժամանակ»²⁰: Բաֆֆին առանձնահատուկ կարևորություն է տալիս հայ երիտասարդությանը քաղաքական ազատասիրության, հայրենասիրության ու մարդասիրության ոգով դաստիարակելու գործին: Հենց դրանում է նաև տեսնում գրականության սոցիալ-դաստիարակչական ու քաղաքական նշանակությունը:

Ուրվագծելով ազգային-ազատագրական շարժման սոցիալական ուժերի պատկերը, հայրենասեր գրողը ընդգծում է և այն կարևոր հանգամանքը, որ թուրքական բռնակալության լծի տակ հեծում է ոչ միայն արևմտահայությունը, այլև ուրիշ այլ ազգեր՝ հրեաները, այսորիները, քրդերը²¹ և այլն: Այս դիրքերից Բաֆֆին քննադատում է նաև գաղութատիրությունը, հանդես է գալիս ոչ միայն հայազգի, այլև բոլոր ծնշված ազգերի ազատագրության պաշտպանությամբ: Նման հարցադրումը բացահայտում է Բաֆֆու և Նալբանդյանի գաղափարական ընդհանրությունները:

Բաֆֆին համոզված է, որ ազգային-ազատագրական շարժման գրավականը բոլոր հարը՝ տահարվող ժողովուրդների սերտ համագործակցության մեջ է: Ու նոր խոսք է ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության մեջ: Ամենուսն գրողի անուրանալի վաստակը նաև նրանում է, որ ազգային-ազատագրական շարժումը ոչ միայն օտարերկրյա ծնունդը, այլև լուրջանշյուր ազգի ներսում դասակարգային հակամարտություններն ու միջնորմները վճռականորեն հաղթահարելու, հաղթանակ արդարության, հավասարության և համընդհանուր երջանկության ազգի կենսունակ ուժերը համախմբելու կարևորագույն միջոց է:

Ջ. Բ. МАКАРЯН—Раффи как идеолог армянского национально-освободительного движения.— Борьба за национальное освобождение армянского народа, будучи главным движущим мотивом и идейным стержнем деятельности Раффи, мыслилась им в тесной связи с задачами социального освобождения народа.

Раффи дал развернутую характеристику армянского национально-освободительного движения, указал на те объективные и субъективные условия, на основе которых возможно утверждение принципов социальной справедливости и равенства.

¹⁸ Բաֆֆի, հ. 4, էջ 476:

¹⁹ Բաֆֆի, հ. 9, էջ 424:

²⁰ Բաֆֆի, հ. 9, էջ 439:

²¹ Բաֆֆին նկատի ունի բացառապես եգիպտացիներին: